

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 16-ին, ուրբաթ օրը, Փարիզից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Երևանի օդանավակայանում, հանուն Հայոց Հայրապետի, սրբազանին դիմավորում և բարի գալուստ է մաղթում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը՝ ընկերակցությամբ բարեշնորհ Դերենիկ սրկ. Սայանի:

Գեր. տ. Սերովբե արքեպիսկոպոսը, Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, Վեհարանում ընդունվում է Հայոց Հայրապետի կողմից, որի հետ ունենում է ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում:

Գեր. տ. Սերովբե սրբազանը Մայր Աթոռ էր ժամանել Հայոց Հայրապետի հավանությանը ներկայացնելու Նորին Սուրբ Օծության այս տարվա մայիս ամսին Ֆրանսիա կատարելիք ընդունելությունների և այցելությունների ծրագիրը:

Փարիզում, Մարսելում, Բորդոյում, Լիոնում կազմվել են հայրապետական ընդունելության հանձնաժողովներ, Հայոց Հայրապետի հանգամանքին համապատասխան հայ և ֆրանսիական շրջանակներում Նորին Սուրբ Օծության այցելությունները կազմակերպված և բարձր մակարդակով անցկացնելու համար:

Մարտի 20-ին, ուրբաթ օրը, գումարվում է Վեհարանում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին ներկա է լինում նաև տ. Սերովբե արքեպիսկոպոսը, որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամ:

Հատենի ժողովի Վեհափառ Հայրապետը ողջունում է տ. Սերովբե արքեպիսկոպոսի ներկայությունը:

Հայրապետական պատվիրակ սրբազանը իր հերթին խոսք է առնում և Հայոց Հայրապետին որդիական շնորհակալության և երախտագիտության խոսք է ուղղում Նրա ողջույնի և բարիգալստյան բարեմաղթությունների համար, ապա խոսում է Հայոց Հայրապետի Ֆրանսիա կատարելիք հովվապետական կարևոր ու պատմական այցելության նշանակության մասին:

Տ. Սերովբե սրբազանը այնուհետև համառոտակի Գերագույն հոգևոր խորհրդին է ներկայացնում ընդհանրապես Արևմտյան Եվրոպայի և ի մասնավորի Ֆրանսիայի հայության եկեղեցական, մշակութային կյանքը:

Սրբազանի զեկուցումը լսվում է հետաքրքրությամբ:

Տ. Սերովբե արքեպիսկոպոսը հինգշաբթի օրը, մարտի 29-ին, հրաժեշտ է տալիս Հայոց Հայրապետին, Մայր Աթոռի միաբանությանը և Մոսկվայի վրայով մեկնում է իր պաշտոնատեղին:

Երևանի օդանավակայանում տ. Սերովբե արքեպիսկոպոսին ճանապարհում են Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը և Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ սրն. Գառնիկ Քեռիյանը: